

Գ. ԳԼՈՒԽ.

### ԿՐԱԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Կրակի պաշտաման վերաբերեալ դեռ ևս շատ մնացորդ-ներ կան. այսպէս շատ սովորական է կրակով երդուիլը. միշտ ասում են՝ կրակը օրհնի, մեղք համարելով ասել կրակը հանգցրու. Եւ գրեթէ բոլոր պառաւները նախ քան կրակ հանգցնելը խաչակնքւում են և «Յիսուս ու Քրիստոս» ասում:

Կրակի վրայ ջուր չեն ածում, որովհետև այդպիսի դէպ-քերում նա ասում է, թէ երբ ես մեռել, որ շիլաճաշդ չեմ եփել:

Կրակը չեն ծեծում և ոչ թքնում վերան և կամ ոտը գնում, մեղք համարելով ալդ, ինչպէս և' չեն անցնում վե-րալից:

Գիշերները կրակ փոխ չեն տալիս, հաւատալով, որ տը-նեցիներից մին կը մեռնի:

Կողի տակից ոչ մի կտոր կրակ չեն վերցնում, որ կա-թը չը շաղի (փսորի), Եթէ ստիպուած են վերցնելու, նա-խապէս կաթի վրայ մի տերե և կամ մի կանաչ բան են դնում:

Եթէ փալտը վառուելիս ձայն է հանում, (վըթվը-թում է), ասում են. «Աչքը դուրս գայ, մեր մասին խօսող կար»: Յետոյ կամ մի քիչ մոխիր են ածում, որ դադարի և կամ զանազան անուններ տալիս, որի ժամանակ որ դադա-րեց, ալդ ապացոյց է, որ նա էր խօսում:

Երեկոյին լողանալիս մի կրակ են ձգում ջրի մէջ, որ չարերը չխփեն և թողնեն փախչին:

Վառած փալտը տջ ու ձախ չեն շարժում, որ իրենց հալը չմեռնի:

Կրակը հանգցնելիս չեն փչում, մեղք համարելով ալդ, այլ մոխիր են ցանում վերան:

Կրակը կալծակից մնացել է կալծքարի մէջ և յետու մարդիկ զայլախաղով (չախմախ) խփել հանել են:

Կրակն ու ջուրը քոր և եղբայր են: Մի անգամ նըրանց մէջ վէճ է ծագել, թէ որն է ուժեղ և վճռել են փորձել: Քոյլը կրակը իւր ոլժը ցոյց տալու համար գնացել սարերի խոտը վառել է, իսկ եղբայր ջուրն էլ գնացել բոլորը հանգցրել է: Այն օրուանից նրանք միմեանցից բաժանուել են:

\* \* \*

Կրակի պաշտաման հետ կապուած է և օճախի պաշտամինը: Յայտնի է, որ օճախ բառը ունի և՛ գերդաստան իմաստը: «Մեծ օճախի տղալ է»—սովորական գովասանքն է, որ տրում է մեծատունների որդիներին: Մեծ օճախից աղջիկ ուղելը և կամ մեծ օճախին աղջիկ տալը ամէն մի ծնողի տենչանքն է կազմում: Երբ գնում են աղջիկ ուղելու՝ սովորաբար ասում են: «Մունք եկալ ընք մըն հափուր մոխիր եր օնինք քու օճախէտ, տանինք մեր օճախին նհետ խառնինք»:

Երբ մի ընտանիք գերդաստանից բաժանում է, նոր շինած օճախը առաջին անգամ վառում է գերդաստան մեծը, նոյն գերդաստանի օճախից բերած կրակով:

Երբ նոր հաւեր են գնում, բռնում են օճախի վերալ, և ստներին ջուր ածում, որպէս զի ընտանենան և չհեռանան այդ օճախից:

Գիւղի հիմնադրի կամ նշանաւոր տան օճախը նուիրական է դառնում ոչ միայն ալդ գերդաստան, ալլ և ամբողջ գիւղի համար. հարսանեաց ժամանակ հարս և թագուոր եկեղեցուց դուրս գալով ալդ տեղ են գնում համբուրելու: Եկեղեցի չեղած տեղում պստկը արդպիսի օճախի վրալ է կատարում \*):

\*) Տես երես 115.

Հարսը թէ իւր տնից դուքս գալիս և թէ սկեսրանց տուն մանելիս համբուրում է օճախները \*\*\*):

Պ. ԳԼՈՒԽՎ

## ԳՐԻ ՊԱՅՏԱՄՈՒՆք

Վարանդայում դեռ ևս մնացել է ջրի պաշտամունքը:  
Մեղք են համարում ջրի վրայ թքել և կամ նախատինքով  
վերաբերուիլ: Նորահարսը առաջին անգամ աղբիւրի մօտ գա-  
լով, զոհ է բերում նրան ցորեն: Կիրակի օրերը մոմեր են  
վառում սուրբ համարուած աղբիւրների առաջ: Առողջու-  
թիւն հայցող հիւանդը մոմեր է վառում, աքաղաղներ զո-  
հում, երկրպագում և աղօթում աղբիւրին:

Աղքիւրներից միքանիսը ամենայն տեսակ, իսկ միւսները մի մի որոշ հիւանդութիւնների բուժիչ սրբատեղիներ են համարում: Առաջիններից նշանաւոր են Շօլու գիւղում, Ճորակի մէջ գտնուողը, Վերին Սզնէքում «Կանաչ խաչ» անուն աղքիւրը, Հզորդի գիւղում «Մոշ-աղքիւրը», որ իւր անունը ստացել է մօտի մոշի թփերից և որի մօտ մի մեծ, պաշտուող կաղնի ծառ կալ. Զանախչի գիւղում «Մեծ աղքիւրը», որի վրայ մի քանի անգամ լուս է իջել: Ներքին Թաղավարդում երկու թքեռնի ծառերի տակ պաղպաչող «Կարմիր աղքիւրը», որի մօտով անցնողը պարտաւորուած մի բան է դընում աղքիւրի քարի վրայ և այնտեղից մի ուրիշ բան վեցցնում:

Որպէս մի որոշ հիւանդութեան բուժիչ, նշանաւոր է Գիւնէ-ճարտարի «Խաւաշիչակ» աղբիւրը։ Ղալին-Խութի հըսկայական ժայռերի գագաթից կաթիլ կաթիլ ջուր է հոսում և հաւաքում ժայռի մէջ փորուած մի նեղ և երկար փոսի մէջ։ Մոլոքով հիւանդութիւն ունեցողները գալիս ալս ջրի

<sup>\*\*</sup>) *Sb<sub>2</sub> Lu<sub>2</sub>* 137, 139 & 140.